

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի N 216 որոշում

Մայիսի 10, 1990թ

Ք. Երևան

ՀՍՍՀ Ժողկրթության նախարարության գիտա-արտադրական հանրակրթական փորձարարական «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի գործունեության լավագույնն ուղղված միջոցների մասին

Ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածննդն և առաջավոր կրթական գաղափարների, ներառյալ թիվ 183 դպրոցի մանկավարժական ստեղծագործական կոլեկտիվի մշակածների, ներդրման նպատակով՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է՝

1. Սահմանել «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի հիմնական նպատակներն ու խնդիրները.

ա) դաստիարակչական-կրթական գործընթացի շրջանակներում յուրաքանչյուր անհատի ներուժի բացահայտմանը և դրա զարգացմանն ուղղված առավելագույն պայմանների ստեղծումը, անհատի հոգևոր ազատագրմանը նպաստող բազմակողմանի աջակցությունը

բ) դպրոց-համալիրի մասնաճյուղերի ստեղծումը հանրապետության քաղաքներում և գյուղական շրջաններում, նրանցում վարժարանների, գիմնազիաների, գյուղատնտեսական և գեղագիտա-հումանիտար ենթահամալիրների և աշխատանքային ուսուցման այլ ձևերի ստեղծումը, որոնք ապագայում կվերաճեն ինքնուրույն տարածքային կրթական համալիրների:

2. Որոշել, որ դպրոց-համալիրի հաստատությունների նախագծային և շինարարական աշխատանքների միակ պատվիրատուն գիտա-արտադրական հանրակրթական փորձարարական «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրն է (Բլեյան Ա.Շ.)

3. Հայկական ՍՍՀ Պետպլանին՝ (Մկրտչյան Մ.Յ.), Ֆինանսների նախարարությանը՝ (Զանոյան Զ.Ա.) սույն որոշման համաձայն

համապատասխան փոփոխություններ մտցնել 1990թ. Հայկական ՍՍՀ-ի տնտեսական և սոցիալական զարգացման պետականի և պետական բյուջեի մեջ:

4. «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրին (Բլեյան Ա.Շ.) Հայկական ՍՍՀ Պետականի հետ համատեղ (Տեր-Իսրայելյան Ա.Վ.) և շահագրգիռ շրջսովետներին՝ նախատեսել դպրոց-համալիրի հաստատությունների նախագծումը և շինարարությունը ըստ հավելված 1-ի:

Հայկական ՍՍՀ Պետշինին՝ (Շահբազյան Լ.Կ.) յուրաքանչյուր հաստատության համար որոշել դիֆսավոր կապալառուին և մոբիլիզացնել բոլոր անհրաժեշտ նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսները, որպեսզի շինմոնտաժային աշխատանքները կատարվեն ըստ սահմանված ժամկետների:

ՍՍՀՄ Բնակսոցբանկի Հայաստանի հանրապետության մասնաճյուղին՝ (Խաչատրյան Ռ. Ն.) դպրոց-համալիրի հաստատությունների նախագծումը և շինարարությունը բացառության կարգով ֆինանսավորել ներկայացված աշխատանքային գծագրերով՝ ըստ փաստացի արված աշխատանքների ծավալի:

Երևանի, Աշտարակի քաղսովետները և Եղեգնաձորի, Մարտունիի, Կրասնոսելսկի շրջսովետները սահմանված կարգով որոշում են «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի ուսումնական մասնաճյուղերի շինարարության համար հատկացնել հողատարածքներ:

5. ՀՍՍՀ առևտրի նախարարությանը՝ (նախարար՝ Սուխուոյան Ռ.Ա.) Արատես գյուղում Արամ Մանուկյանի անվան սպորտ-առողջարարական ճամբարի կահավորման նպատակով ապահովել անհրաժեշտ սարքավորումներով ըստ N°2 հավելվածի:

6. ՀՍՍՀ Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման նախարարությանը՝ (Մելքումյան Գ.Ա) մինչև 1990 թվականի առաջին կիսամյակի վերջը ավարտել Կավշուղ-Արատես ճանապարհի շինարարությունը:

7. Հայկական ՍՍՀ Պետականին՝ (Մկրտչյան Մ.Ց.)

ա) քննարկել ավտոտրանսպորտային միջոցների հատկացումը «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրին՝ ըստ Հայկական ՍՍՀ ժողկրթության նախարարության 1990թ պատվերի

բ) 1990 թվականին, բացառության կարգով, դպրոց-համալիրին հատկացնել մանրամեծաձախ լիմիթ՝ հեռուստացույցների և սպորտ-զբոսաշրջային գույք ձեռք բերելու համար:

8. Հայկական ՍՍՀ Պետմատակարարմանը՝ (Ստեփանյան Ս.Ն.) հատկացնել դպրոց-համալիրին երկու BM-403 և 3 BM-12 մակնիշի տեսամագնիտոֆոն, հինգ սև-սպիտակ հեռուստացույց:

9. Հայկական ՍՍՀ ֆինանսների նախարարությանը՝ (Ջանոյան Ջ.Ա)

ա) «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի համար 1990 թվականին սարքավորումներ և գույք ձեռք բերելու նպատակով որոշել ֆինանսավորման աղբյուրները՝ ըստ ներկայացված հաշվարկների:

բ) Դպրոց-համալիրի հաստատությունների կապիտալ վերանորոգման համար քննարկել 1990 թվականին լրացուցիչ 400000 ռուբլի հատկացնելու հարցը:

գ) Հայկական ՍՍՀ Պետպլանին՝ դպրոց-համալիրի հետ համատեղ որոշել, թե որ կապալառու կազմակերպություններն են իրականացնելու հաստատությունների կապիտալ վերանորոգումը:

10. Հայկական ՍՍՀ Պետպլանին՝ (Մկրտչյան Մ.Ց.) Հայկական ՍՍՀ Պետմատակարարմանը՝ (Ստեփանյան Ս.Ն.), ժողկրթության նախարարությանը՝ (Դավթյան Մ.Ա.), Մշակույթի նախարարությանը՝ (Մելիք-Օհանջանյան Յու. Ա.), Առևտրի նախարարությանը՝ (Սուխուդյան Ռ.Ա.), և Հայարդշին միավորմանը՝ (Մակարյան Լ.Մ.) «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրին հատկացնել անհրաժեշտ սարքավորումներ, մեխանիզմներ և նյութեր ըստ պատվերի:

11. Թեթև արդյունաբերության նախարարությանը՝ (Մկրտչյան Ռ.Ս) 1990թ. «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրին հատկացնել տեխնոլոգիական սարքավորումներ՝ «Մանչուկ» աշակերտական արհեստանոցների կահավորման համար: Հավելված 3

12. Հայկական ՍՍՀ Պետագրոարդին՝ (Հակոբյան Ա.Պ.) 1990 թ. «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրին հատկացնել սարքավորումներ և մեխանիզմներ ըստ հավելված 4-ի:

13. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմամշակութային հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությանը՝ (Բարսեղյան Լ.Ա.) մինչև 1990 թվականի հուլիսի 1-ը ավարտել Եղեգնաձորի շրջանի Արատես գյուղի վանական համալիրի նախագծա-ծախսային փաստաթղթերի կազմումը և սկսել վերականգնողական աշխատանքները:

14. Հայկական ՍՍՀ Գրահրատարակչության պետական կոմիտեին՝ (Պողոսյան Ս.Կ.) դպրոցական տպարանի ստեղծման գործում աջակցել դպրոց-համալիրին:

15. Հայկական ՍՍՀ Ժողկրթության նախարարությանը՝ (Դավթյան Մ.Ա.)

ա) 1990 թվականի և հետագա տարիների նախարարության գիտա-հետազոտական աշխատանքների ծրագրում ընդգրկել «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի մանկավարժական կոլեկտիվի հեղինակային կրթական հայեցակարգը:

բ) մեկամսյա ժամկետում դպրոց-համալիրի մանկավարժական և ծառայողական անձնակազմի սպասարկման ծախսերի մասին առաջարկություններ մշակել և ներկայացնել դրանք Հայկական ՍՍՀ Ֆինանսների նախարարություն և Հայկական ՍՍՀ Պետպլան:

Հայկական ՍՍՀ Պետպլանին՝ (Մկրտչյան Մ.Յ.) համապատասխան նյութերը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում համաձայնեցված առաջարկությունները ներկայացնել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդ:

16. «Սևան» Ազգային պարկի տնօրենին՝ (Սուխուդյան Գ.) մեկ շաբաթվա ընթացքում «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի երեխաների բնապահպանական կրթական նպատակների համար շուրջտարյա կայանի տեղաբախշման առաջարկություն անել:

17. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի Ժողկրթության բաժնի վրա:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ՝ Վ. Մարգարյանց

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝ Գ.Վարդանյան

Թարգմանություն ուսերենից